

ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Ավազանի անունով՝ Սամվել: Ծնվել է 1955 թվականի հունվարի 19-ին Թբիլիսիում: 1958 թվականին ընտանիքով փոխադրվել է Երևան և 1961—1967 թվականներին սովորել տեղի № 82 միջնակարգ դպրոցում:

1967 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1972 թվականի դեկտեմբերի 25-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

1973 թվականին ավարտել է հոգևոր ճեմարանը փայլուն հաջողությամբ: Ավարտաճառի նյութն է եղել՝ «Մովսես վրդ. Երզնկացու «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, զոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաւոր հարցն» աշխատությունը (ուսումնասիրություն, բնագիր, հավելված): Սույն ավարտաճառի «Ուսումնասիրություն» բաժինը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի 1973 թվականի Թ և ԺԱ համարներում:

1973 թվականի հուլիսի 22-ին Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տ. Սիոն արքեպ. Մանուկյանի:

1973 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 1975 թվականի դեկտեմբերի 31-ը աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում՝ քարտուղարի պաշտոնով, և միաժամանակ հոգևոր ճեմարանում դասավան-

դել «Քրիստոնէական» և «Վարք սրբոց» առարկաները: Այդ տարիներին եղել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գավազանակիրը և այդ հանգամանքով 1975 թվականի հունիսի 5—19-ը ուղեկցել Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետին հովվապետական ուղևորություններին Անգլիա և Ֆրանսիա:

1976 թվականի հունվարի 10-ին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի կողմից ստացել է մասնավոր վարդապետական գավազան կրելու իշխանություն: Վարդապետական ավարտաճառն է եղել՝ «Մովսես վրդ. Երզընկացու դավանաբանական գործերը» (ուսումնասիրություն և բնագրեր): Սույն աշխատությունը նույնպես տպագրվել է «Էջմիածին» ամսագրում. 1974 թ. Թ, Ժ, ԺԲ, 1975 թ. Ա և Գ համարներում:

Տ. Եզնիկ վրդ. Պետրոսյանը Մայր Աթոռի երիտասարդ և խոստումնալից միաբաններից է, որը, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հունվարի 19-ին մեկնեց Աթենք՝ հետևելու տեղի համալսարանական դասընթացներին և հմտանալու հունարեն լեզվի, հայրաբանական և աստվածաբանական գիտությունների մեջ: